

ՏԱՐԱԾՈՒՆ ԿՈՒՆԱԿԱՆ ՖԼՈՒՆ ԵՒ ՀՂՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչ էր հարկավոր էք Իմանալ

Ի՞նչ է Տարածուն ԿՈՒՆԱԿԱՆ ՖԼՈՒՆ (նախապես ծանոթ որպես Խոզային Ֆլու):

Տարածուն ԿՈՒՆԱԿԱՆ ՖԼՈՒՆ շնչարության սիստեմն վարակող մի հիվանդություն է, որի պատճառն ֆլույի մի նոր վիրուս է, որ հետզհետե տարածվում է աշխարհի զանազան մասերում: Նա պատճառ է հանդիսացել բազմաթիվ մարդկանց հիվանդանոց փոխադրման եւ նույնիսկ մահվան ԱՄՆ-ի զանազան մասերում:

Տարածուն ԿՈՒՆԱԿԱՆ ՖԼՈՒՆ Ինչպե՞ս է Տարածվում:

Ֆլույի վիրուսներն ընդհանրապես անձից անձ են փոխանցվում հիվանդ անձի հազի կամ փոնչումի միջոցով սփռվող կաթիլներից: Ձեր զավակն կարող է նաեւ վարակվել ֆլույով մանրէներով լի մի հարդակի դպչելէ ետք իր աչերին, քթին, կամ բերանին դպչելիս: Ֆլույի վիրուսներն կարող են ապրել սեղանների, դռների բռնակների կամ ծորակների վրա:

Ի՞նչ են Տարածուն ԿՈՒՆԱԿԱՆ Ֆլույի Ախտանշտերը:

Տարածուն ԿՈՒՆԱԿԱՆ Ֆլույի ախտանշանների մեծ մասը նույնն է ինչ որ սեզոնային ֆլույինը: Սա ընդգրկում է ջերմ, չոր հազ, կոկորդի ցավ, լեցուն քիթ, մարմնային ցավեր, գլխացավ եւ հոգնածություն: Տարածուն ԿՈՒՆԱԿԱՆ Ֆլույն կարող է նաեւ փորհարություն, փսխել եւ ավելի վտանգավոր բարդություններ առաջացնել որոշ անձերի համար, ներառյալ հղի կանայք:

Տարածուն ԿՈՒՆԱԿԱՆ Ֆլույն Կարո՞ղ է Վտանգավոր Լինել Հղի Կանանց Համար:

Այո, դա կարող է առողջական խնդիրներ առաջացնել եւ նույնիսկ թոքատապ ու կանուխ ծննդաբերություն: ԱՄՆ-ում յուրաքանչյուր հղի չորս կանանց մին որ հիվանդանոց է փոխադրվել տարածուն ԿՈՒՆԱԿԱՆ Ֆլույից վարակվելիս մահացել է մնայուն հսկողության բաժնում: Հղի կանանց չծնած երեխան եւս վտանգի ենթակա է եթե մայրը ֆլույից վարակվի:

Տարածուն ԿՈՒՆԱԿԱՆ Ֆլույից Ինչպե՞ս են Բուժվում:

Սեզոնային ֆլույին նման հեղուկներ խմելն ու հանգստանալն ու դպրոց չերթալը կարեւոր հանգամանքներ են: Կարող էք ասետամինոֆեն (acetaminophen, ինչպիսին են իպոպրոֆեն ibuprofen, Tylenol®, Motrin®, Advil®) կամ նապրոկսեն, (ինչպիսին է Ալիվը [Aleve®]) ջերմի կամ մարմնային ցավերի համար:

Եթե հղի էք անմիջապես կապվե՛ք ձեր բժիշկին երբ ֆլու ունեք կամ նույնիսկ ֆլույանման ախտանշտեր էք տեսնում ձեր մոտ կամ ալ շփման մեջ էք եղել տարածուն ԿՈՒՆԱԿԱՆ Ֆլույից վարակված մեկի հետ: Ձեր բժիշկն ձեզ կասի եթե որոշ դարմանումի կկարոտեք: Նա կարող է ձեզ հակավիրուսային մի դեղ հանձնարարել որպեսզի կարողանա ծանո խնդիրների առաջքն առնել, ձեր հիվանդությունն մեղմացնել, կամ նրան ժամանակը կարճացնել: Նման դեղեր ամենալավ արդյունքն են տալիս երբ հանձնարարվում են ախտանշանների սկսելիս ամենաուշը մինչեւ 2 օր ետք: Բժիշկներ ակրող են նույնիսկ ավելի ուշ նման դեղեր հանձնարարել հղի կանանց եթե նրանք բարձր ռիսքի մեջ գտնվեն:

Հղի Կանայք Տարածուն ԿՈՒՆԱԿԱՆ Ֆլույի Պատվաստն Ստանալու՞ են:

Հղի կանանց համար կարեւոր է ֆլույի Երկու տեսակի պատվաստներն ստանալը: Սա նշանակում է թե սեզոնային եւ թե Տարածուն ԿՈՒՆԱԿԱՆ Ֆլույի պատվաստներ: Ֆլույով վարակվող հղի կանայք ավելի բարձր ռիսք ունեն հիվանդանոց փոխադրվելու: Մինչ ձեռքերն լվալն ու հիվանդներից հեռու մնալն օգնում են հղի կանանց ֆլույն չստանալու, պատվաստումն միակ ամենալավ միջոցն է հղության որեւէ շրջանին:

ԿՈՒՆԱԿԱՆ Ֆլույի Պատվաստն Ապահո՞վ է Հղի Կանանց Համար:

Ֆլույի պատվաստներն հղի կանանց կամ նրանց մեջի մանկան չեն վտանգում: Հղի կանայք պիտի ստանան միայն մեղյալ վիրուսներ պարունակող ասեղով տրվող պատվաստը (“flu shot”) քայց երբե՛ք կենդանի վիրուսներ պարունակող քթից ցրիչի միջոցով(nasal spray) տրված պատվաստը: Այս վերջինն չի արտոնվել հղի կանանց համար:



Հղի Կանանց Ընտանիքի Անդամներն Կարող են Քթի Ցրիչով Տրվող Պատվաստն ստանալը:

Այո: Ընտանիքի անդամներն որոնք հղի չեն կարող են քթից ցրիչի միջոցով (nasal spray) տրված պատվաստը ստանալ: Պետք է ասել, որ պատվաստների պարունակած մեռած կամ ողջ վիրուսներից ֆլույով չէք վարակվելու: Նրանք, ընդհակարակն, հակամարմիններ շինելով օգնում են ձեզ եւ ձեր մարմնի տոկունության, որպեսզի ապահով ըլլաք իսկական վիրուսներին դեմ պայքարելու:

Տարածուն Կ1Ն1 Ֆլույի Պատվաստն Պահածո (preservative) Նյութեր Պարունակու՞մ է:

Մի կարգ պատվաստներ պարունակում են Տիմերոսալ (thimerosal) կոչված պահածո նյութը: Փաստարկ չկա որ Տիմերոսալ պարունակող պատվաստներն կարող են վտանգ պատճառել հղի կանանց կամ նրանց գրկած երեխաներին: CDC-ն արտոնում է դա: Շուտով S Տիմերոսալից զուրկ պատվաստներ պիտի պատրաստ լինեն հղի կանաց եւ մինչեւ երեք տարեկան մանուկների համար:

Հղության Ժամանակ Ստացած Ֆլույի Պատվաստ Կարող է Նաեւ Օգնի երեխուս՝ Երբ Նա Ծնվի:

Անցյալի հետազոտություններն ցույց կտան որ պատվաստն ստացող հղի կանանց ծնող զավակներն ալ պաշտպանված կլինին: Պատվաստ ստանալն նաեւ նշանակում է որ դուք հիվանդությունն չպիտի ստանաք ու զայն ձեր չծնած զավկին չպիտի փայխանգեք: Հետեւաբար, Պատվաստվելը միաժամանակ լավ է ձեզ ու ձեր զավկին համար:

Ի՞նչ պիտի Իմանամ Տարածուն Կ1Ն1 Ֆլույի Մասին, Եթե Ծծկեր Երեխա Ունեմ:

Տարածուն Կ1Ն1 Ֆլույի պատվաստն ապահով է նույնիսկ եթե ծծկեր մանուկ ունեք: Դա կարող է ծծկեր երեխան ալ պաշտպանել: Հետեւաբար, Պատվաստվելը միաժամանակ լավ է ձեզ ու ձեր զավկին համար:

Կարող էք ձեր զավկին կաթ կերակրել պատվաստվելէ ետք: Վստահ եղեք ձեր ձեռքերն լվանալու եւ հագն ու փոնքտալը ծածկելու: Լավ կլինի երեսի մասք (facemask) գործածեք եթե դա կա ու զայն կարող էք կրել: Նկատի ունենալով որ ծծկեր մանուկներն շատ դյուրաբեկ են, ավելի լավ կլինի որ հիվանդ չեղող մի անձ ձեր ամբարած կաթը կերցնի նրանց: Կարող էք այս միջոցին բժիշկի հանձնարարած դեղերն ստանալ:

Նոր Ծնած Երեխան Պատվաստվելու Կարիք Ունի՞:

Ոչ: Նոր ծնած կամ 6 ամսականից վար մանուկներ չեն կարող Տարածուն Կ1Ն1 կամ սեզոնային ֆլույի պատվաստ ստանալ: Երբ նրանք 6 ամսականից ավելի են՝ երկու պատվաստներն ալ հանձնարարելի են նրանց համար:

Ուրիշ Ի՞նչ Կարող Եմ Անել Ընտանիքս Տարածուն Կ1Ն1 Ֆլույից Պաշտպանելու:

Պարզ եւ ամենօրյա քայլեր կարող են ձեզ ու ձեր ընտանիքն պաշտպանել ֆլույից:

- Հազալիս կամ փոնչալիս քիթն ու բերանը ծածկել թղթե թաշկինակով կամ հաքուստի մի կտորով:
- ձեռքերն հաճախ լվանալ ջրով ու օճառով կամ ալ հատուկ մաքրիչ «ճել» գործածելով (gel sanitizers):
- Փորձել ձեր աչերին, քթին ու բերանին չդպչել, որով մանրեներն այդպես են տարածվում
- Հիվանդ մարդկանց հետ շփում չունենալ: Եթե Տարածուն Կ1Ն1 ֆլույից վարակված մի անձի հետ շփման մեջ էք եղել, հարց տվեք ձեր բուժառայողին եթե բուժման կարիքն ունեք, ֆլուն ստանալու ձեր շանսերն պակասեցնելու:
- Եթե հիվանդ էք, տանը մնացեք առնվազն մինչեւ ձեր ջերմի ավարտից 24 ժամ:

Հավելյալ Տեղեկության Համար.-

Հիվանդությունների Կանխարգիլման Կենտրոն (CDC)
(800) CDC-INFO կամ (800) 232-4636
www.cdc.gov/h1n1flu/

Կալիֆորնիա Նահանգի Հանրային Առողջության Դիպարտամենտ
(888) 865-0564
www.cdph.ca.gov

Լոս Անձելոս Գավառի Հանրային Առողջության Դիպարտամենտ <http://publichealth.lacounty.gov/H1N1>

Առողջական Ծառայությունների համար
Զանգահարե՛ք.- 2-1-1 Համարին
Ելեքտրոնային Փոստ.- Listserv@listserv.ph.lacounty.gov
Եթե արձանագրվել էք ուզում «Subscribe DPHUPDATE first name last name» գրե՛ք փոստի «subject» ի վայրին ու փոստին մեջ:

11/5/09